

14589

Հայոց պատմութեան համար թիւ
24/III 1919



Մահաց Պետրոսեան

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



891.99 11

891.99
7-50

ԲԲ.108
5-20

891.99
Դ-50

- 6 NOV 1922

Մ


ՄԱԴՐԱՍ ՊԵՏՐՈՎԻՆ



ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

3406

ԳՐՔՈՅՑ II



Թ Բ Յ Լ Ի Ւ

Տպարան «ԷՊՈԽԱ» Գանովսկի. Յ

1911



VON 8-

ՄԵՔԵՆԱՎԱՐԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Արտատպւած Կովկասի առաւճութ. 1907 թ. Հոկտեմբ. 21 և 27.

Եւ դու, հսկայական մեքենայ, թափով դառնում
ես առանցքիդ շուրջը տաղտուկ մի օրինակութեամբ.
քո ամեն մի պատուտակը, ամեն մի անիւը շարժ-
ում են նոյն ճշտութեամբ, նոյն համաչափ զարկե-
րով ու ոչ մի վայրկեան, ոչ մի ակնթարթ չեն շեղ-
ւում, սահմանւած ճանապարհից։ Ոլորւում ես դու
իշխող ու կատաղի և վաղը և միւս օրը և յաւիտեան...

Ու ես փոքրիկ մրջիւնս, աշխատում եմ քեզ
հետ գուգընթաց իբրև հարիւրաւոր մասնիկներիցդ
մէկը, հնազանդ ու ստրուկ։

Բայց ես կարող էի ջարդ ու փշուր անել քեզ,
բաւական է զալատնիկներիդ մի ծայրը թէքեմ, բա-
ւական է ժանիքներիդ մէջ մի փոքրիկ, միած պող-
պատ ձգեմ և դու կ'որոտաս կատաղի ու կը փշրւես։
Կը լոեն միօրինակ զարկերդ, կընդհատւեն հսկայա-
կան անիւներիդ փառահեղ պտոյտները, և տեղդ կը
մնայ այլանդակ, անձն մի կոյտ։ ու խուլ լիշողու-

թիւններ կը մրժնջաս միայն անցած, գնացած օրեւ-
րիդ համար:

Բայց ի՞նչու չեմ խորտակում քեզ. ի՞նչու աչա-
լսւրջ հսկում եմ, որ պտուտակներիցդ և ոչ մէկը
վկասւի... Երբ ձայնդ ժամանակից շուտ կամ ուշ է
լուռում, լեղապատառ պտտում եմ շուրջդ, իւղում
հազարաւոր շրթունքներդ, շոշափում ամեն մի մաս-
նիկդ: Իսկ դու յաղթական էլի դառնում ես տրորե-
լով անիւներիդ մէջ և իմ զգացմունքները, և իմ
սիրած փայտայած իղձերը, և ի՞նձ ամբողջովին...

Դու դարձել ես ի՞նձ քո կտորներից մէկը, թեր-
և քեզ համար ամենափոքրիկը:

Եւ ես՝ իբրև մի կտոր մետաղ՝ ձուլել եմ անիւ-
ներիդ մէջ, դառնում եմ առանցքիդ շուրջը նոյնքան
կատաղի, նոյնքան մոլեգին:

Այն օրից երբ քեզ ճանաչեցի, այն օրից երբ
ընկա քո դուռը, լսեցի մի սարսեցնող ձայն: Հոգիս
էր խօսում, բողոքում. ցնցւում էր տանջանքի ցա-
ւից. «Ես մարդ եմ, ի՞նչու մեքենայ դարձայ»: Բայց
ինքս ի՞նձ միտթարում էր. «Երբ մեքենան կանգնի—
չէ որ նա միշտ չի աշխատում—մենք դուրս կը
թռչենք, կը գրկենք օդը, երկինքը, ազատութիւնը»...

Բայց անցան այն օրից շատ տարիներ ու թուան
իմ հոգուց այն սփոփիչ մանուկ տենչերը. ու ահա
այսօր մազերս ճերմակել, մէջքս կորացել, և ես
գլխակոր իւղում եմ ու իւղում մեքենան: Ու վաղը,
գուցէ և այսօր՝ նա իր ժամկիքներով բզկաէ, վերջ
դնէ իմ փթած կեանքին և ի՞նքը դարձեալ կմնայ
հսկայ ու միշտ յաղթական և իմ արեան այն սև բի-

ծը դեռ երկար կը պահւի նրա պաղ պողպատի վրայ...

Անցած գիշեր նեարդներս քնել ու մի պահ քա-
րացել էին բիբերս: Անցեալի յուշերը եկել-պաշարել
էին ինձ: Յիշեցի, երբ դեռ քսան տարեկան, թարմ
երիդասարդ, նետւցի աշխարհ և լի եռանդով ձեռքս
մեկնեցի այս նոյն մեքենային. ամուր սղմեցի նրա
ցուրտ լծակը և ասացի. «մենք ընկերներ ենք այսու-
նետեւ»: Ցուրտը անցնում էր երակներիս մէջ և թւում
էր, մատներիս ծայրերից սկսում էր պողպատանալ
ամբողջ մարմինս:

Եւ երբ առաջին անգամ իմ պողպատ ձեռքով
քաշեցի լծակը, զգացի, որ ես արդէն մետաղ եմ.
միայն սիրտս էր, որ այնտեղ, կրծքիս տակ՝ դալուկ
և վհատ՝ դեռ բարախում էր:

Քսան տարի է անցել այն օրից, դու էլի փայ-
լում ես, բայց իմ երկաթ—նեարդներս արդէն քայ-
քայւել, ոսկորներս փթել, մազերս գորշացել են, մէ-
ռել է իմ մէջ ամեն ի՞նչ. ամեն ի՞նչ... ու այդ ամե-
նը դու խլեցիր ի՞նձանից, տարար ու խեղդեցիր:

Եւ ահա ծանր մուրճը ձեռքիս՝ ահարկու խողո-
վակներիդ տակ պանկած՝ կապար եմ լցնում կցանդ,
մուրճի հարւածներով ամրացնում նրան. երեսիս
թափւում են ժանդստ հիւթերդ, լցւում աչքերիս
մէջ, փոյթ չէ սակայն. մուրճի մի ծայրով կը սրբեմ
այն, իսկ միւս ծայրով կապարդ կամրացնեմ, որ վիթ-
խարի ոյժդ աւելի որճանայ:

Դեռ ձեռքերս չեն դողում, դեռ կարողանում են
նպատակին խփել, ու դու հանգիստ ես. բայց վաղը-
միւս օրը՝ երբ ձեռքերս դողան և մի անզգոյշ հարւած՝

կատաղի հոսանքդ ինձ դուրս կընեաէ, իսկ դու նորից կը ոլորւես՝ հզոր ու յաղթական, ու չես էլ յիշիլ քսան տարւայ մեքենայ—մարդ ընկերոջդ: Եւ քանի քանի թարմ ոյժեր լի բուռն եռանդով, եկել ու քայրայւած կորել են անհետ...

Համրէ իմ յարկը, երբ ես տաննեմ. մեքենայի ցրտութիւն է փշում ինձանից. լուռմ են ամենքը... Անա վերջացաւ մեր ճաշը, ես կուշտեմ, իսկ նրանք կիսաքաղցած. փոյթչէ ինձ սակայն՝ չէ որ ես եմ նրանց հաց բերողը...

Երեխաս հիւանդէ, նա պիտի մեռնի, բայց ուշանում է. հարկաւոր է, որ այսօր մեռնի. վաղը... վաղը ես չեմ կարող. վաղը ես մեքենայ եմ...

«Դու գնում ես, իսկ երեխան»... լուռմ է մօր ձայնը դռների միջից, սոսկալի ձայնը: «Երեխան թող մեռնի, առանց հօրը» դողանջում է ականջիս մեքենայի սուլոցը. և ես փախչում եմ...

Եւ այնտեղ խրոխտ կամարների տակ, նրա համաշափ զարկերի հետ՝ մեռնում է մանուկը ու ես դարձեալ իւղամանը ձեռքիս՝ իւղում եմ նրա հրէշաւոր շրթունքները...

Տուր, տուր այն հզօր պողպատի կտորը: Նա իմ ձեռքիս է, իմ այս քայրայւած նեարդներից ու թունաւորւած արիւնից եմ ձուլել նրան. ու կը նետեմ այդ նրա ագահ ժանիքների մէջ. թող խորտակւի նա ու նրա այլանդակ կոյտի հետ խառնւեն իմ վաստակած սոկորները...

ՅԱՂԹԻԱԾ ՄԱՀԸ

Արտատալած «Վատակ»-ից № 1 յունարի 1-ին 1908 թ.

Երկայն մազերը թափւած ուսերին՝ ծածկում են հիւծւած ու մերկ մարմինը ամբոխի ծաղրից:

Կուռ շղթաները մաշում են նրա արունքները ոսկոտ, կարմիր արիւնը կաթ-կաթ ծորում է մատների ծայրից ներկելով նրա փշոտ շաւիղը:

Գլխակոր, տրտում շարժում է հանդարտ դալուկ ոտքերը բեկորների վրայով, մոխրակոյտերի միջով:

Նա որոնում է իր բուռն հոգով տեհչած, փայտայծ ու դեռ չբացւած վառ ծաղիկները...

Նա որոնում է, բայց մահու պաղութիւն է փըշում երեսին քար անսպատից...

Ու խարխափ աչքերով, վհատ, յուսահատ անցնում է առաջ...

Եւ ամբոխը հե ի հե, շուրջը բոլորած, քրքիջը բերնին, ծաղրում է նրան...

Կանգնած է դահիճը. մոայլ կախաղանը սառառութիւն մահաշունչ գիրկը բացել է նրան,

Ցնցւեց ու բողոքի կատաղի յորձանք դուրս թը-

ռաւ կրծքից։ Պղտոր հայեացը ամբոխի միջից թափանցեց հեռուն, ուր մըրկւում էր վիշտը, շուրջը հեղեղում կիզիչ լաւայով, այրում, խորտակւում դարերի նզովք ստրկութիւնը, կսկիծն ու ցաւը...

Նա ժպտաց—նա ապրում էր. վրէժով գինովցած՝ գգւում էր կրակը, համբուրում կատաղի. ու ծով բոցերի ալիքների մէջ մոռացաւ իր համար պատրաստւած մահը...

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ

Արտատպւած «Դործ» № 3 յունւարի 6-ին 1908 թ.

Խարխափ աչքերով, սարսուռը շրթիդ, ուրւականի պէս սողում ես առաջ։

Սողում ես գեղուն գանգուրների մէջ, հոգութրթիռ լարերի հետ, կեանքի անվերջ խրախճանքում կանում ես ամեն մի կենդանի գոյութիւն, անյայտութեան խաւարում խեղդում ես նրան։

Դաժան հոգով, սարսուռը շրթիդ՝ մահ ես տարածում. մի ահեղ նշան, մի թեթև շարժում—և շուրջդ ամեն ինչ քարանում, զարհուրանքով է լցւում. եւ դու, դժոխային քըրիջով, ոսկրացած ծնօտներդ զարնելով իրար, ճախրում ես առաջ։



Դառն հեղնանքներով դու աշխարհ եկար։

Վրիժառու հոգու բովի մէջ դու ծնունդ առար։

Այդ դու ես, քո զարհուրելի ճիրաններիցդ առաւոտն է արթնանում, քո լեղի արցունքներիցդ կեանքն է ծագում։

Այդ դու ես, տառապանքի ծոցիցդ վարդեր բացողը և սև օրերի ժպիտ բաժանողը։

Ա՞ն, կործանւիր։

Կործանուի թող, լքւած ու տանջւած քո այն
ահոելի փառքը. դառնութեան, թունալից օրերի մէջ
թող խորտակու նենգաւոր տենչանքներիդ կատաղի
որբանը: Նա թող դողայ, թող տարածուի խաւարը և
ամենուրեք տիրէ սև մահը—դու տիրես...

Այն ժամանակ դու կը մեռնես սքանչելի անմե-
ղութեան արբունքում. և ես կը քրջամ. կը քրջամ
առաւօտեան թարմ օդի մեղմ զեփիւոի հետ, կապ-
րեմ, դառնութեան թոյնը՝ քամելով մինչև վերջին
մըուը:

Տարար ամեն ինչ. և կենսունակ խանդը, և
զգայուն հոգու արշալոյսի ժպիտը. տարար դալարա-
բոյը բնութեան սքանչելի վեհութիւնը, տարար եռուն
կեանքը—և ամեն մի կենդանի շունչ:

Բայց ազատութեան կրակը... ես այն խլեցի քե-
զանից. նա իմ հոգու ամենանւիրական խորքումն է
պահւած:

Նրան ևս ուղում ես տիրանալ, կաշկանդել, խոր-
տակել,—ահա քու յաւիտենական կոիւը:

Երբ դու զսպանակը բանաս, իմ սիրտը կը կան-
չէ նրան:

Թող բիբերդ նայեն ինձ կատաղի, թող աչքերդ
կարդան իմ հոգին և թող ամեն ինչ վերջանայ այ-
լւո... Հրէշաւոր կրքերիդ այդ անզուսպ տենչը... նա
կը մարէ:

Քու տարփանքով լի կուրճքը, այդ այլուող հո-

գիդ նա կը սառցնէ և քո այլայլած աչքերդ կը քա-
րանան...

Դու անգիտակցաբար, մի սքանչելի մոլորութեան
մէջ, այն կրակն ինձ տւիր և ընդմիշտ կուրացար.
և հոգիդ ընդ միշտ սևացաւ և քու դէմքդ քար
մնաց...

Դա էր քո ամբողջ էութիւնը և ես խլեցի նրան
քեզանից. և դու ուղում ես տիրանալ նրան. բայց
հէնց ձեռքդ բարձրանում է—նա բոցավառում է ա-
ւելի կատաղի և քո ցուրտ ձեռքիդ տակ մնում է
կմախքը. ու դու կոյր, ազահ աչքերով գտնում ես
միայն անշնչացած դիակ: Սառը, ցուրտ՝ նա ընկած
է քո առաջ:

Ուկորներդ բաղխւում են իրար, ծնօտդ դողում
է կատաղի և դու նորից գալարւում, նորից սողում
ես հաստ պարիսպների, երկաթների ծակոտիների,
փեղկերի միջից...

Բացւում է ազահ որկորդ, տիրապետութեան
տենչը գազազեցնում հոգիդ. ցուրտ ջերմութեամբ
վառում ես դու, շրթունքներդ շառագունուում, աչ-
քերդ փայլում են կատաղի զայրոյթով: Դաժան ձեռ-
քերդ մեկնում ես մանուկին, երկաթ մատներով զըր-
կում ես նրան. ազահութեամբ ուղում ես մօտենալ,
տարփանքով լի կուրճքդ այլուում է կատաղի յուղ-
մունքների մէջ խեղդւած. բացւում են աչքերդ...
Բայց քո առաջ ընկած է միայն կեղեր... սառն,
ցուրտ...

Այն կրակը դու չես կարող խլել ինձանից: Նա

իմս է։ Թող թէ նա միայն մի վայրկեան է ապրել իմ կրծքում։ մի վայրկեանում էլ նա լեռներ կը խորտակէ, եթերքը կը տապալէ և կը վերածնւի նորից։

Փառք նրան, որ վերածնում է և ապրում անվախճան...

Կ Ա Մ Ո Ւ Ր Զ

Արտատպւած «Գարուն» ալմանախ № I 1910 թ.

Եյն ցող առաւօտին էր, երբ առաջին անգամ շողողաց նրան արբունքի ճառագայթը—շողողաց ու շնչաց երջանկութեան առաջին համբոյրը. նա խեց տիեզերքից բերկրութեան բաժակը և անսահման կարոտով քամեց մինչև վերջին մրուրը։

Վայելքի ամենանգօր ոյժը տւեց նրան մի նոր կեանք. սուրբ համբոյրը, ծաղիկներին ձուլւած, մորմոքում էր սիրտը, և նա հեռու ունայն աշխարհից սաւառնում էր բիւրեղ եթերում, որպէս աստղերի ցոլք, որպէս յստակ ալլեների լուսանցիկ շղարշ։

Օրհնում էր այն սփոփիչ առաւօտը, երբ սիրատենչ ծովին հասած՝ ուխտեց անսահման բերկրութեան հրապոյրը սիրել. օրհնում էր այն հզօր վայրկեանը, երբ ինքնամոռացութեան մէջ արբենում էր տիեզերքի հմայքով։

Վայրկեաններ սահեցին—սահում էին հեշտանքի բուռը տագնապների մէջ. անհուն սիրոյ տենչը սքողւում էր շուրջը իբրև երազ, իբրև թոթովանք միայն. կուսական անարատութիւնը թառամում էր նրա ճակատին, թափիծը մորմոքում էր սիրտը։

Եւ ահա բնութեան անողոք դատավճիռը վստան քայլերով մօտեցաւ նրան և սառը շեշտով շշնջաց. — նա երկունքի մէջ է, շուտով դառնալու է մայր:

Նա մնաց քարացած. սոսկումից խեղդւում էր, նրան թւում էր որ շսւրջը դատարկւում է. ամենքը փախչում են իրանից. մանուկները ծաղրում են, մեծերը անարգում են. ուր գնա, ուր փախչի...

Հարկաւոր է ազատւել. ինչ գնով էլ որ դա լինի, ծածկել, անհետ կորցնել... այն ժամանակ—այն ժամանակ մենք նորից կապրենք, նորից կը սլանանք կեանքի երջանիկ ուղին. շշնջաց նրա մէջ մի ներքին ձայն:

— Այս... դոդողացին շրթունքները. սիրալ ցաւից կծկւեց. արիւնը սառաւ երակների մէջ:

Նա այլևս ոչինչ չէր զգում, ոչինչ չէր տեսնում. երկունքի ահեղ տագնապի մէջ սոսկում էր. ահա մի ցաւատանջ վայրկեան և նա գետի ափին է:

Գետը հոսում է կատաղի. ջրերը փրփրում, ուժգին հարւածով ծեփւում են ժայռերին. Նա ամեն ինչ կը կրանի, իր ալիքների մէջ կթաղի ահոելի անդունդը—կը կորցնի անհետ. իսկ իրան գերեզման է հարկաւոր, մի փոքրիկ, վտիտ գերեզման, այս ջրերի մէջ պահելու:

Արցունքներ չեն վազում նրա աչքերից, հայեացը գամեել է կատաղի հոսանքին և շտապ շտապ շարժւում է առաջ. սոսկումի մի ճիգ ու նա ազատ է. ալիքները ուռչում են, նորից կուտակւում և գետը սուզւում է առաջ:

Նա ժպտում է ցաւի յաղթական տենչով. չէ որ

այդպէս էր հարկաւոր. մարել հանգնել, ազատւել... Եւ այն ժամանակ ու այն ժամանակ... Նա քրքջաց ցաւագար և հեկեկաց... վերջին հայեացք այն ցուրտ ջրերին և ամեն ինչ վերջացաւ.

Նա փախչում է. անցնում է խոր անդունդների եզրով: Բայց գետը փրփրում է, ալիք-ալիք ծեծելով ժայռերին վազում է նրա յետեկից: Ոտքերը դողում որունքները ծալւում են, նա հազիւ է կարողանում առաջ շարժւել. գետը բոլորել է շուրջը. պատնէշ է կանգնել. ալիքները բացել են իրանց ցուրտ ծոցը նրա դիմաց:

«Մի ազատ թռիչք կեանքի սոսկումից». վայում է նրա շուրջ ու մրիւկը, նա պատմում է խեղդւած մանուկի յուսահատ ճիչը, նա պատմում է մատաղ կրծքի վերջին մաքառման այն սոսկալի բարախումները:

Գետը կուտակւում է. ալիքները ցնցւում են. ժայռերը ծածկւում են ջրերի հորձանքից. ցաւ ու հեծկլտանք խառնւում են իրար, և մութ ու անդունդ մի ծուլւած՝ խոնաւում են սարսուռը ցաւատանջ, ահեղ:

Ահարեկ սրտով, թախիծը աչքերին նա դիտում է կատաղի ալիքները. նա պիտի անցնի գետի միւս ափը—պիտի անցնի սոսկումի միջից... սրտի կսկծից աչքերը մթնում են և նա ընկնում է ցած: Բուռն ցաւից նա բթացել է, նա այլևս չի տանջւում, հոգութախիծը էլ չի մորմոքում սիրտը:

Անցնում են վայրկեաններ. բայց նա շարունակ նայում է ջրերին. գետը լայնացել է, մեծացել. նրա միւս ափը էլ չի երեւում, ալիքները կուտակւում են

իրար, ապա նորից բլջում, թաղում, անյայտանում յատակում, ջրերը յորձանք են տալիս և նրա ամեն մի ցոլքից մի մանուկ է ծնում, գանգուր մազերով, յաւիտենական փակւած աչքերով. դալուկ ոտքերով երերում են գետի ափին, դողում են ամբողջ մարմնով, ցնցւում են ցուրտ սառնամանիքներից:

Ահա վտիտ մատներով գամւեցին իրար և պարում են սև շրջանակով. պարում են և օրօրի երգ են հիւսում, նանիկ են մըմնջում, հրաժեշտ են տալիս:

Հրաժեշտի երգը մխում է սրտի մըմուռը, շըրթունքները գամւում են իրար, հոգու կսկիծն է մորմոքւում:

Նա լուռ, ուժասպառ, ահաբեկ սրտով կլանում է մանուկների օրօրը—նա զգում է ցաւի խորութիւնն իր ամբողջ էութեամբ, մկանունքների ամբողջ հիւսւածքով:

«Սրբազն ուխտի անէծքը և յաւիտենական արբունքի վայելքը սոսկումի կրծքում, ցնորքների և մոռացութեան մէջ մեզ ծնունդ առան ու թաղեցին խորը, խորը»...

«Մի չար օրի, դիւային բրքջի ծնունդն էինք մենք»:

«Դողդոջ շըթանց մի սուրբ համբոյրը և անհուն սիրոյ մի սփոփիչ վայելքը մեզ կեանք տւեց...»:

«Մեղմ զեփիւոի ջերմ դգւանքը և դառնութեան սքանչելի ցողն էինք մենք»...

Նրանք երգում էին վշտահար և դառնագին: Եւ

շըջանակը լայնանում է. ահա նրա մի ծայրը հասնում է իրան, աւելի մօտ, աւելի մօտ. նրանք մազգցում են ժայռերից, ճանկուտում են քարերը: Խոռոչները լայնացել են, բիբերը մեծացել ու քարացած աչքերով ժպտում են նրան:

Նա սարսափից ցնցւում է. երակներից սարսուռ է անցնում. նա զգում է, ինչպէս ոտքերի ծայրերից սկսում է քարանալ: Նա տեսնում է, ինչպէս այն արեան կարմիր շիթը դալկացած շրթանց վրայ մնացել է դեռ թարմ, դեռ հոսում է...

Դա իր մանուկն է, որին թաղեց ջրերի մէջ այնպէս խորը... նա այժմ կենդանի է, խօսում է մօր հետ. նա կարող է մօրը գետի միւս ափը անցնել:

—Կամար կը կապենք, կամուրջ կհիւսենք. անցիր, մենք կհանենք քեզ գետի միւս ափը: Անցիր, մայրիկ, քոյրերիս ուսերի վրայից. այնտեղ միւս կողմը դու կստանաս երջանկութիւն, վայելքի ամենազօր վայրկեանը. դու նորից կշնչաս, կարբենաս, նորից դու նոր կեանք կստանաս, անցիր...

—Անցիր մեր զանգուրների վրայից. մենք սիրով կտանենք մեր գլխի վրայ. խնդրում էին նրան մանուկները—այնտեղ դու կսլանաս նոր թևերով, կապես սքանչելի վեհութեան մէջ. անցիր...

Ահաբեկութեան մէջ սոսկում է, նա չի կարողանում և ոչ մի շարժում անել. ամբողջ էութեամբ դիտում է. յորձանք տւող ալիքների մէջ վիթխարի կամուրջ է կապւում. ջրերի խորքից բանում են կենդանի բեկորներից հսկայական սիւներ. վտիտ մարմիններ հիւսւում, ձուլում են իրար:

Ահա յաղթական կամարները միանում են. մի փերջին ճիգ ու կենդանի կամուրջը պատրաստ է:

Ջուրը փրփրում, յորձանք է տալիս բեկորների շուրջը. ալիքները կատաղի մոնչում, տենչում են խորտակել, հիմնյատակ անել կենդանի կամուրջը: Մանուկները պայքարում են հսկայական ոյժի դէմ. նրանք անզօր ոտքերով, դալուկ կրծքով դիմադրում են ջրերի յորձանքներին:

Մայրը անցնում է. երկու վտիտ մանուկներ առաջնորդում են նրան. նա ոտքերի ծայրով է հենցում և քայլում է զգուշութեամբ, որ մանուկների գլուխը չցաւի. մանուկները սղմում են նրա ոտքերի տակ, որպէսզի նա ապահով անցնի իրանց վրայից:

Անցնում է նա առաջի կամարը. գետը լայնանում է. նրա առաջ բնում է մի նոր կամար. կամուրջը կարծիս ծայր չունի. հազարաւոր գլուխների զանգւած անցնում է նրա ոտքերի տակից. նա այլևս առաջ շարժւել չի կարող, զգում է սոսկալի տանջանքներ. թւում է, որ մանուկները ճանկուում են իր սիրտը. այն փոքրիկ եղունգներով հանում են աչքերի բիբերը... կսկիծը անցնում է հոգու խորքերը. նա ընկնում է արեան մէջ վշտից խելակորոյս և ցաւատանջ:

Փոթորիկը անցել էր, գետը փոքրացել սահում էր առաջ առանց աղմուկի. ալիքները հանգել էին, ջրերի յորձանքը մարել:

Նա ուշի եկաւ. սարսափով նայեց շուրջը. գե-

տի միւս ափին էր: Սրունքներից ծորում էին արեան կաթիլներ. սուր-սուր քարել ծակոտել էին ոտքերը, պատառուել էին զգեստները. ցնցոտիների մէջ գողում էր: Աշխատում էր ծածկել մերկութիւնը. սարսափով նայում էր շուրջը, որ մարդիկ չտեսնէին իրան այդ գրութեան մէջ:

Մի անթափանց կոշմար թանձը փոշով պաշարել էր նրան, պատկերացնել չէր կարողանում իրան ուր լինելը. ճգնում էր ոտի ենել, աչքերը բանալ, դիտել շուրջը, ազատել այն սև խաւարից, որ կապարի պէս ճնշում էր նրա հոգին: Սրունքները ծալւում էին, աչքերը մթնում, ամբողջ մարմնով սարսուռ էր անցնում. յուսահատ, անմխիթար հայեացքով որոնում էր. շուրջը ամայի, ոչ մի կենդանի արարած. կարծես ինչ որ ուզում էր յիշել, մտաբերել. մի բան կենդանանում էր նրա մէջ: Յանկարծ ամբողջապէս ցնցւեց. ձեռքերով կուրծը ամուր սղմեց, որ այնքան արագ չբարախի. աչքերի վրայ խաղաց մի սփոփիչ լոյս, երեսը փայլեց երջանկութեան բերկրանքից. նա քրքջաց իրեր մի մանուկ անբիծ, անարատ:

Նա այլես չէր զգում իր մերկութիւնը. նա այլես չէր ամաշում ոչ ոքից, նա կսիրէ, կը փայփայէ իր մանկան. ահա նա կը մտնի գետը և կը վերցնի նրան. չէ որ նա այնտեղ է, պահւած է ժայռերի ծոցում:

Ժափիտը աչքերին, վերածնութեան կենսունակ քրքիջով նա որոնում է ջրերի մէջ, մի քարից մինչև միւս քարը, մի ժայռից մինչև միւս ժայռը... որոնում է երկար, մինչև որ գիշերը գայ:



Նա իր ուրախութիւնը պատմում է սարերին, լեռներին ծառերին ու ծաղիկներին. Նա պատմում է բոլորին, թէ ինչպէս գիշերները մանուկները երգում են նրան օրօրի երգը, նանիկ են ասում, և նա հանգչում է մանուկների գանգուրների վրայ այնքան բախտաւոր ու երջանիկ:

Նա պատմում է, որ ինքը գտաւ բոլոր կորած ու մոռացւած մանուկներին և իր առատ ստիճանքներով կերակրում, մնուցանում է նրանց: Նա պատմում է և նրա երեսին փայլում է երջանկութեան բուռը խանդը, նրա աշքերից թափում են զմայլմունքի անարատ արցուները...

Եւ յուսախաբութեան այն սկ օրին նա ապրում է միայնակ իր սուրբ անուրջներով: Նա այլևս չի զգում իր ուսերի վրայ երկրային ծաղը. Նա այժմ գտել է երջանկութեան այն չքնաղ աշխարհը, ուր թագաւորում է հոգու անդորրութիւնը և զգացմունքի վեհութիւնը:

Լուս է շուրջը, միայնակ և խաղաղ. միայն գետն է ոլորտում ցաւագար ու թախծալից: Նա այսօր պահեց, ամփոփեց իր սառը ջրերում վշտերից ամենախորը, տանջանքից ամենասոսկալին...

1001
5406

ԹԱՓԱՌԱԿԱՆԸ

Արտատպւած օՀորիզոն» № 172—174. 1910 թ.

Երկաթուղու մի խուլ կայարանում տասնեակ ճանապարհորդներ անհամբեր սպասում էին գիշերւայ մարդատար գնացքին: Նրանցից մի քանիսը դանդաղ քայլերով անց ու գարձ էին անում, ոմանք տեղները նստած յօրանջում էին, մի երկու հոգի էլ բազկաթոռներին կրթնած՝ նիրհում էին:

Տիրում էր տաղտկութիւն:

Դահլիճի գոների մէջ երկաց մի ծերունի. Նա անհամարձակ ներս սողաց և քաշւեց մի անկիւն:

Հագուստը պատառուտած, գլխին զինւորականի հնամաշ կարտուզ: Երեսը ամբողջապէս պատած էր կնճիռներով, դէմքի վրա տիրում էր ինչ որ խորը թախիծ:

Մի այլ գէպքում ոչ ոքի ուշադրութեանը նա չէր արժանանալ, բայց այստեղ, երեկ տաղտկութիւնից՝ բոլորի հայեացքն էլ նորեկը գրաւեց գէպի նրան. մէկը նրանցից մինչև անգամ սկսեց սրախօսել.

— Ինչպէս երեսում է, բանդ բուրդ է, քեռի:

— Աւելի լաւ է, երեք կոպէկ տաք, պարոն: Նա դողդողալով մեկնեց ձեռքը:

— Բոլորն էլ յետ քաշւեցին. նրանք զգացին, որ աղքատի հետ գործ ունեն:

— Ես օր հաց չեմ կերել... հաւատացէք... ուղիղ
եմ ասում. Աստծուն է յայտնի... Նա երեսը խաչ
հանեց որ հաւատան:

— Այդ կոպէկները խնդրում ես, որ մի օդի ևս
կուլ տաս. այնպէս չէ: Ծերունին սկզբում կարկա-
մեց, կարծես ինչ որ դժւար հարց պէտք է լուծէր,
ապա սկսեց խօսել համարձակ.— Այս, պարոններ, այդ
երեք կոպէկով ես պէտք է օդի խմեմ. ինչու խարել և
ձեզ և Աստծուն:

— Տեսնում էք, որ մեղք է ձեզ ողորմութիւն
անելը:

— Դու այսօր քանիսն ես կուլ տւել քեռի, ծի-
ծաղեց մի ջահէլ կին:

— Աստծուն է յայտնի... այսօր իմ բերանը...
գողացին ծերունու շրթունքները, բայց դա աւելի
շուտ ինքնաբերաբար էր, նա շուտով զգաստւեց:

— Զգիտեմ, խանում, իմ կերածի և խմածի հա-
մար հաշիւ չեմ պահում:

— Այդ կոպէկները ուրախութեամբ քեզ կը
տայինք, եթէ իմանայինք, որ դու այդ փողով հաց,
կերակուր, մի որևէ հագուստ կը գնէիր և ոչ միմի-
այն այդ անիծւած օդին. դժգոհութեամբ խօսեց կի-
նը և շուռ տւեց երեսը:

— Օդու հետ լինում է և զակուսկա: Գիտէք, այդ
պանդոկապետները, նրանք շատ բարի մարդիկ են.
մեր գրութիւնը լաւ գիտեն. երբ օդին խմում ենք,
բաց են անում «զափաղը»... Նու, մի կտոր սև ջիգար,
վրան թթու կաղամբ, մի պատառ հաց, նորից կալ-
քաս, շատ տեղ լինում է և կանաչի, մի բողկ, սա-

լաթի աղցան... ձիշտ է երբեմն գոռում են վրադ.
— Նու, բաւթառ, բաւական է լափես, թող ընկերնե-
րիդ էլ բան մնայ, բայց շատերն էլ իրանք են առա-
ջարկում յաճախորդների թերմացքից, մի կտոր եփած
միս, բիֆշտեկսից մնացածը, կամ չորացած կոտլէտ.
տարանի զլուխը կամ պոչը... «կեր, եղբայր, անօթի
կը լինիս», ասում են նրանք: Պատահում էլ է յաճա-
խորդներից բարի մարդիկ, մի թաս օդի էլ նրանք են
առաջարկում. այն ժամանակ սկսում է նորից:

— Լոիր, եղբայր, դարձաւ նրան պատկառելի
դէմքով մի պարոն, որ մինչ այդ լուռ լսում էր. Նա
խօսում էր հանդարտ և խրատական:

— Դու մեզանից խնդրում ես թոյն, դու ուզում
ես, որ մենք քայլայենք քո կեանքը. և դու անում
ես այդ ինքդ էլ չիմանալով:

Հաւատացած եղիր, որ դա կը տանի քեզ գե-
րեզման:

Գիտութիւնը այժմ ապացոյց է տւել, որ ալկօ-
հօլը իր բոլոր տեսակներով զարնուրելի թոյն է: Նրա
գործածութիւնը թէկ չնշին քանակով, առաջնում
է տանջանք, քայլայում է առողջութիւնը. ստորա-
ցնում է, իսկ զլիսաւորը՝ խոր ազդեցութիւն ունի ժա-
ռանգականութեան վրա և տանում է նրան դէպի
անկումը:

Նայիր, երեսդ կնճոռոտել է, աչքերիդ տակ պար-
կեր են գոյացել, իսկ սիրտդ, թոքերդ քայլայւած են.
ներսդ ամբողջապէս վէրքեր են: Իննը տոկոսը մեռ-
նում է ալկօհօլից. դա մի սոսկալի թիւ է կազմում
մահացուների մէջ: Ամբողջ աշխարհը կուում է դրա

դէմ, այդ սարսափելի ախտի, որը անցել է մեր ոսկորների մէջ:

Բացի այդ, գրանով վատ օքինակ էք դառնում մարդկութեան համար. ի՞նչ պէտք է սովորեն ձեզանից մեր երիտասարդները:

— Ճիշտ էք ասում. այդպիսի բարի խրատներ ինձ շատերն են տւել. ինքս էլ Աստւածանից օրական հարիւր անգամ... ասում եմ Տէր Աստւած, տուր ինձ մահ, որ իմ զզւելի ներկայութիւնից ազատեմ բարի մարդկանց, վատ օրինակ չդառնամ,—ինչպէս ասաց յարգելի պրօֆէսօրը,—բայց իմ քայըքայւած թոքերով հանդերձ՝ մահը փախչում է ինձանից:

Ահա, այժմ այս տաք անկիւնունն եմ, մինչե գնացքը կը գայ, դուք բոլորդ կը նստէք և կը գնաք ձեր տները, բայց իմ վիճակն ի՞նչ է լինելու: Նա շուրջը նայեց ու զգուշութեամբ շարունակեց,—ժանդարմը ծոծրակից հրելով՝ դուրս է նետելու և այս ձիւն-ձմրան պէտք է կուչ դամ պատի տակ, մի մութ անկիւնում, որ փողոցի շներն անգամ ինձ չտեսնեն, և ծածկւած այս լաթերովս դողացնեմ մինչև լուսաբացը:

Բոլորը ինձ արհամարհում են, բոլորը նախատում են և խորը հոգուս մէջ ես էլ եմ ինձ պախարակում, ես էլ եմ զզւում ինձանից...

Բայց ես էլ մի ժամանակ մարդ էի, աշխատում էի, յայտնի գործարանում. վականազործների վարպետն էի: Ցածր ձայնով, կարծես ինքն իրան համար, սկսեց խօսել ծերունին: Երբէք դժգոհ չէի վիճակիցս. ունէի գեղեցիկ, խելօք կին, մի փոքրիկ աղջիկ և մեր

համեստ յարկի տակ ապրում էինք շատ սիրով և խաղաղ:

Ամեն երեկոյ երբ աշխատանքից վերադառնում էի տուն, կինս, երեխաս շրջապատում էին ինձ. մաքուր հեշտաեռը սեղանին եռում էր և մենք ուրախ թէյ էինք խմում:

Ես պատմում էի գործարանի կեանքից, օրւայ պատհած դէպքերից, կինս տանը լսած տեսածներից և այսպէս սահում էին մեր օրերը, տրտընջալու ոչ մի իրաւունք, առիթ չունէինք: Աստւած իր ողորմած բարեգթութեամբ տւել էր մեզ և առողջութիւն և մի կտոր հաց:

Բայց դա երկար չտևեց, մի օր մեր գործարանը խուզարկեցին և շատերի հետ ինձ էլ ձերբակալեցին ու տարան բանտ:

Զգիտեմ ձեզանից որևէ մէկին ծանծթ է արհետաւորի կեանքը. Երբ նա աշխատանք չունի.—ինչպէս ձաւկը ջրից հանես...

Ծանը էր ընտանիքիս դրութիւնը: Երբ կինս առաջին անգամ եկաւ ինձ տեսութեան, նրա աչքերը շատ արտասունքից կարմրած, ուռած էին: Աստւած ողորմած է, միսիթարում էի ես նրան, տան եղած չեղածը կամաց-կամաց վաճառիր, մի կերպ ապրեցէք, մինչև տեսնենք:

Դէ գիտէք, կնոջ համար որքան ծանը է իր տան երերը ծախելը. վերջապէս ի՞նչ աւելորդ բան կունենայ մի արհեստաւոր իր տանը: մի քանի աթոռ, մի սեղան, մի փոքրիկ պահարան, մահճակալ... Եթէ մեր տանը մի բան կար, դա հեշտաեռն էր, որ գին ու-

նէր. մնացածը տանը գործածելու՝ որոշ արժէք ունէին, բայց վաճառելու՝ անպէտք:—Ծախի՛ր հեշտաեւը, մի 10—12 ուսւբլի գին կտան, դիմեցի ես կնոջս մի այլ անգամ:

—Ամեն ինչից կըզրկւեմ, բայց դա չեմ ծախիլ. ասաց կինս և աչքերը լցւեց արտասունքով:

Երկաթի ցանցի արանքից ես նշմարեցի կնոջս յուսահատ ցնցումները. նա աշխատում էր ժպտալ, յուսադրել ինձ, բայց ներքին յուզմունքներից չէր կարողանում զսպել իրան, դա սոսկալի էր ինձ համար:

—Ինչպէս է երեխաս, արտասունքս խեղելու համար բղաւեցի ես:

—Նրան ես լացով թողեցի. նա ուզում էր գալ...

—Ինչու չըերեցիր:

Նա այլս չկարողացաւ իրան զսպել, բարցրածայն հեկեկաց:

—Ներիր, սիրելի, ես մոռացել էի, որ բանտումն եմ, ասացի ես արտասունքս զսպելով:

Նա ինձ համար բացի թէյշաբարից բերել էր տապակած միս և սպիտակ հաց:

—Այս որտեղից, հարցրի ես զարմացած:

—Հարկաններիս լւացք արեցի... բանտի կերակուրները ասում են վատ է. դու քեզ լաւ պահիր... նա ուզում էր շատ բան ասել, բայց ստիպեցին, որ շուտով հրաժեշտ տայ. վիզը ծուռ, տխուր, տրտում հեռացաւ:

Դուք չէք կարող երեակայել, թէ այցելսւթեան օրերը բանտարկեալների համար ինչ է. և ինչ սոս-

կալի տանջանք է, երբ այդ օրը քեզ ոչ ոք չի այցելում:

Այդ կողմից ես բախտաւոր էի. ամենից կանուխ նա էր բանտի գոները բաղխողը. ես լաւ գիտէի, որ ամենից առաջ իմ ազգանունս է գրւած: Եւ այդ 10—15 րոպէն մեզ համար հաւասար էր մի ամբողջ կեանքի:

Դրանից յետոյ էլ, մենք ապրում էինք նոր յիշողութիւններով, մինչև հետեւալ այցելութեան օրը: Մենք գտնում էինք նորանոր խօսքեր, նորանոր շարժումներ. մեզ պատկերացնում էինք այն ամենը իրա ամենաչնչին մանրամասնութիւններով և ապրում էինք դրանով:

Մի ամբողջ տարի կինս կանոնաւոր գալիս էր և ամեն անգամ մի բան էր բերում ինձ համար. մի անգամ մի կտոր հնդկահաւի միս լաւաշի մէջ փաթաթած, մի այլ անգամ պիրոգի կտոր, բաղցրաւենիք, զանազան պտուղներ...

Եւ զգում էի, չնայելով նա ամեն կերպ աշխատում էր թագնել, որ այդ ըոլորը իր բաժինն է, որ լւացք անելիս տալիս են իրան բարեսիրտ տիկնայք:

Բայց ինձ մի բան աւելի շատ էր անհանգստացնում. նա օրից օր մաշւում հալւում էր. նիհարել, երեսը կնճիռներով պատել, գոյնը թռել, դէմքը դառնել էր թախծալից:

Երբ այցելութեան էր գալիս, կարծես ոչինչ չէր գտնում խօսելու. ես սարսափում էի հարցնել, արդեօք ծախեց տան իրերը, էլ բան մնաց թէ ոչ և

միշտ բաժանում էինք երկուսս էլ արտասունքով։
Նա միշտ կրկնում էր. ես շատ լաւ եմ. երեխաս է
օրէցօր մաշտում. — դէ ես լւացք եմ անում, նաչարը
մնում է դռներին խեղճ ու կրակ։

Մի օր, երբ բանտապետը ներս եկաւ ստուգու-
թեան համար, ես ընկայ նրա ոտքերը և թախանձեցի
թոյլ տալ, որ կինս մի օր երեխաս բերի ինձ մօտ
մասնաւոր այցելութեան։ Նա երկար տատանումներից
յետոյ՝ օր նշանակեց. ինձ այդ մեծ բարերարութիւնը
արաւ։

Այդ երեք օրը, մինչև կինս կը գար և ես կը
յայտնէի նրան այդ ուրախալի լուրը, տարի թւաց.
Վերջապէս հասաւ այդ ցանկալի ժամը. երբ ես կոչու
յայտնեցի՝ նա մասց սառած. — ինչպէս, նա խոստա-
ցաւ թոյլ տալ։

— Այն, վաղը չէ միւս օրը. երեքշաբթի ժամի
2-ին, բղաւեցի ես։

Կինս ուրախութիւնից այնքան էր իրան կորցրել,
որ անմիջապէս ուզում էր գնալ։

— Սպասիր, գեռ ժամանակ կայ խօսելու... ինչ-
պէս ես ապրում, հեշտաեռը ծախեցի՞ր... Օգտւելով
նրա ուրախ արամաղբութիւնից՝ երկի սիրտ առայ
հարցնելու։

— Ոչ, ոչ... ոչ մի բան չեմ ծախել... ես ուզում
եմ, երբ դու Աստուծով դուրս գաս, ամեն ինչ իրա
տեղը լինի. ինձ թւում է, որ եթէ նոյնիսկ մի ա-
թոռ, կամ մի թէյի գդալ անդամ պակասի տնիցս,
քեզ կորցրած կը լինեմ. Այդ առարկաները այնքան
են կապւած քեզ հետ... ամեն մի իր ինձ յիշեցնում

է մեր անցեալը. չէ որ մենք միասին ենք այդ բո-
լորը գնել, միասին ենք գործ ածել. օ, ես աւելի
շուտ կեանքիցս կը զրկւեմ, բայց ոչ մի բան չեմ
վաճառիլ տանից։

— Եւ ոչ բնակարանից դուրս կը գաս։

— Եւ ոչ բնակարանից. Ամեն երեկոյ ես մաք-
րում եմ քո բաժակը, թէյ եմ լցնում և գնում սե-
ղանի այն ծայրին, ուր սովորաբար դու նստում էիր։
Մանիայն բազմեցնում եմ քո աթոռի վրա և առում.
— խմիր, բալիկս, դու և քո հայրիկն ես և նրա աղ-
ջիկը։

Ծերունին կանգ առաւ. կարծես ներսից մի բան
խեխում էր կոկորդը։

— Այո, ես քո տեղը գատարկ չեմ թողնում և
միսիթարում եմ—այնքան յիմարն եմ... ասաց կինս
ու սկսեց հեկեկալ. ինձ թւում է, որ քո տեղը գա-
տարկւի, ես առմիջա կը զրկւեմ քեզանից։

Այդ երկու օր ու գիշեր ես քուն չունէի. ուրա-
խութիւնիցս ես աղաղակներ և բացականչութիւններ
էի անում. ինձ շոյում էր այն միտքը, որ մի այդ-
պիսի հարազատ ընկեր ունեմ ես կեանքի մէջ. նա
ինձ համար աւելի ևս գնահատելի էր. ես շատ լաւ
գիտէի, եթէ նա ուզենար, իր այն գեղեցկութեամբ,
շատ լաւ կապրէր. և ես սրտիս խորքում որոնում էի
նրան արժանի՝ աւելի մեծ սիրոյ մի տեղ. երեա-
կայութեանս մէջ սփոփուում էին նրա էութեամբ
և միենոյն ժամանակ սարսափում էի այն վայրկեա-
նից, թէ ինչպէս պէտք է ես հանգիպեմ նրան՝ այն
սքանչելի օրը։ Նա պէտք է լինի ինձ մօտ, ես պէտք

է շօշափեմ նրա ձեռները, մազերը. պէտք է Մանիկիս գրկեմ. քիչ էր մնում խելագարւեմ,

Վերջապէս հասաւ այդ օրը: Բանտապետը փորձած մարդ էր. նա կնոջս էլ էր զգուշացրել. ինձ հետ էլ երկար խօսեց. նա ասաց, որ շատ չուրախանամ, կնոջս վրայ վատ կաղդէ.—Եղիր չափաւոր. մանաւանդ որ՝ երեխան հետն է. նա բանի տարեկան է.—Ես ասացի չորս տարեկան էր՝ երբ ինձ բանտարկեցին: Տեսնում ես, ուրեմն այնպէս հանդիպիր, ինչպէս սովորաբար լինում է: Ասեցէք, խօսեցէք, ի սէր Աստուծոյ առանց որևէ ցոյցերի. եկ ինձ հետ. Ես քեզ կը տանեմ. նրանք եկել են և վաղուց քեզ են սպառում:

—Եկել են. յանկարծ գոռացի ես:

Նա դէմքը խոժոռեց:—Յետ գնացէք ձեր տեղը. Ես այլս չեմ թոյլ տալ տեսնւելու, եթէ դուք այդպիսի դօնքիշոտութիւններ կանէք:

—Ներեցէք, պարոն բանդապետ, այդ յանկարծ պատահեց:

—Որեմն խելքդ հաւաքիր զլուխդ և մարշ իմ յետեից:

Դուք չեք կարող երևակայել դա ինչ րոպէ էր ինձ համար. վերջապէս սենեակի դուռը բացւեց. կինս կանգնած էր երեխայի ձեռքիցը բռնած և նայում, ժպտում էր:

—Զինա... բացականչեցի ես. աչքերս մթնեց:

Երբ ուշի եկայ, երեխաս երկու ձեռքով փարւել էր վզովս և համբուրում էր՝ հայրիկ, հայրիկ... Չգիտեմ ինչ պատահեց ինձ այդ վայրկեանին, ես

զրկեցի նրան, սղմեցի կրծքիս և ուզում էի փախչել, թագնւել, աշխատում էի մինչև անգամ մանել սեղանի տակը:

—Այդ ուր, բարեկամս. ձեռքը դրեց ուսիս և սիրալիր ժպտաց բանտապետը. մի նայիր, որքան սիրում աղջիկ ունիս. Աստւած պահէ. միւս կիրակի այդպիսի ուրախութիւն երեխ ձեր տանը կը լինի. միասին թէյ կը խմէք, նորից ձեր հին կեանքը. շատը դիմացել էք, քիչն էլ դիմացէք... դէ այժմ ես ձեզ մենակ եմ թողնում. քան ըոպէ, իմ թանկագին բարեկամներս, ձեր արամաղրութեան տակ: Բանտապետը դուրս գնաց ու դուռը փակեց մեզ վրայ:

Ես շուր եկայ: Նայեցի կնոջս. այտերը կարմըն էին յուզմունքից. աչքերը ստէպ ստէպ սրբում էր թաշկինակով:

Նա նստեց կողքիս և մենք լուռ, առանց խօսելու արտասաւում էինք. ոչ մի բառ չէր կարող արտայայտել մեր ուրախութիւնը, կսկիծն ու ցաւը...

—Խօսիր, Զինա, ինչու ես լոել. սթափեցըն ինձ ժամացոյցի բաղխումը. ժամանակը քիչ է. խօսիր, միթէ ասելու բան չունիս...

—Մայրիկ Զան, բանտը ուր է. Նա նայեց աչքերիս. մայրիկը ինձ խաբում էր. ասում էր բանտումն է հայրիկդ. սա հօ սենեակ է. բա ի՞նչու չէիր գալիս մեզ մօտ: Լեզու եղաւ աղջիկս, մօր փոխարէն:

—Ես այստեղ միշտ աշխատում եմ. մեծ մեծ մեքենաներ եմ շինում, հասկանում ես, հէնց որ վերջացրի կը գամ. ինձ շմատ ես սիրում, հա: Նա

Փարւեց վզովս և սկսեց ամուր համբուրել. այ, այսպէս. նա նորից համբուրեց և կարծես անվիրջ:

Դուռը բացւեց. մեծ յանցանք դործածի պէս, մենք ոտքի կանգնեցինք և մնացինք սառած:

— Ժամանակ է, հրաժեշտ տւէք:

Շատ սառնարիւն կերպով համբուրւեցինք և զսպւած բաժանւեցինք՝ հաղիւ հազ պահելով արտասունքներս: Բանտապետի ներկայութիւնը, նրա հրամայողական դէմքը, ամբողջապէս կաշկանդել էր մեզ. տարօրինակ կացութեան մէջ էինք մենք. բանտապետի յետեկից ոտքերս մեքենայաբար շարժւում էին. ես երկար չէի կարողանում ուշքի դալ...

Նա զլուխը կախեց և ընկաւ խորը մտատանջութեան մէջ:

Հետեւեալ այցելութեան օրը կինս իրա ժամանակից մի փոքր ուշ եկաւ և նա անսահման տխուր էր, նա ինձանից մի բան ծածկում էր. չէր ուզում ինձ վշտացնել. դա պարզ էր. Զանազան ծրագիրներ էի կազմում, որ հետեւեալ այցին աղերսեմ, խնդրեմ, որ նա ինձանից ոչինչ չծածկի, բայց նա այս անգամ բոլորովին չեկաւ. իմ դրութիւնը աւելի ևս ծանրացաւ. ես սոսկում էի, հազարաւոր հրէշաւոր մտքեր կրծում էին սիրտս. ոչ մի հնարաւորութիւն չունէի գէթ մի փոքր չափով փարատել իմ դառը մտածմունքները. անցաւ մի ամբողջ ամիս. անելանելի դրութեան մէջ էի. բանտապետին խնդրում էի, բայց նա միշտ աշխատում էր հանգստացնել ինձ.

Մի օր ես նրա ոտքերը համբուրեցի. ուղիղ եմ ասում, ուղղակի համբուրեցի ոտքերի կօշիկները...

Օ, զրանից յետոյ կեանքիս մէջ քանի՞քանի մարդկանց կօշիկներն եմ համբուրել... նա շատ բարի մարդ էր. առաւ ինձանից կնոջս հասցէն և խոստացաւ տեղեկութիւն տալ: Ես անհամբեր սպասում էի ստուգման ժամին և դեռ դռների մէջ՝ վազեցի առաջ:

— Գիտէք, մի ամբողջ ամիս է ձեր կնոջը այն բնակարանից դուրս են արել և նա իբրև թէ... չգիտեմ գուցէ և քաղաքից դուրս է գնացել իր մի բարեկամի... դժբախտաբար մեր ծառան ոչինչ չի կարողացել իմանալ. երկի այս քանի օրս ինքը կը գայ:

Ես մնացել էի բարացած. ապա ի՞նչ կանեմ:

Անցան էլի սպանիչ օրեր, ես նորից ընկայ բանտապետի ոտքերը. նա բարկացաւ, գոռաց վրաս. միթէ մենք քո կնոջ յետեկից պիտի մանգանք, ի՞նչ է, ով գիտէ ո՞ր քաղաքն է, ո՞ր սրիկայի հետ է այժմ... Նա ասաց շատ զղւելի խօսքեր...

— Ոչ, իմ կինս այդպիսիներից չէ. եթէ նա այստեղ չէ, նրան զօռով են տարել:

Հազար ու մի գարշելի մտքեր կուտակւել, պաշարել էին իմ հիւանդու ուղեղը. Զարհուրելի տեսարաններ յաջորդում էին իրար...

... Ընկերներս պառկեցին քնելու, բայց ես հաճախում չէի առնում, — գազաններ են նրանք, բաւական չէ կնոջս... երեխայիս էլ են... Սոսկացի...

Տեղիցս սողացի վեր. շուրջս հանգիստ քնած էին: Զգիտեմ ի՞նչու սկսեցի պարել, պարում էի զգուշութեամբ, որ նրանք չարթնանան: Երկար պարեցի, ապա սկսեցի աւելի կատաղի. այժմ ուզում էի, որ նրանք արթնանան...

Ավսէներ, բաժակներ սկսեցի խառնել իրար. ձեռքերս դողում էին. չէի կարողանում հանգիստ մնալ:

Ընկերներս արթնացան: Ես սկսեցի քեղանները ջարդել, մահճականեր կոտրատել... Սա խելագար է... իսկոյն եկան և ինձ տարան կարցէրը:

Դա մի փոքրիկ, նեղ սենեակ է. մութ, առանց որևէ իրի:

Այդտեղ առանց երկար մտածելու սկսեցի ոռնալ: Դուք երկի լսած կը լինիք, երբ գայլերը քաղցած են մինում, մօտենում են դիւզի դիմաց, մի բլուրի վրայ, դնչերը ցցում են դէպի վեր և աղիողորմ ողբում են...

Ես էլ դունչս հանած դռան բառակուսի նեղ բացւածքից՝ այդ ձեռվ ոռնում էի... ապա սկսեցի շան պէս հաջալ... քաղաքի շները աւելի լալկան են հաջում:

«Այլևս կասկած չկայ, սա դիտմամբ է խելագարւել, որ բանտից ազատւի», ասում էր բանտապետը:

Վճռեցին ինձ սոսկալի պատիժների ինթարկել: Բայց դա սուտ էր. ես ամեն ինչ զիտութեամբ էի անում. այդ բուրը ինձ դուր էր գալիս, որովհետև խեղդում էր իմ ներքին տանջանքը .. այն ժամանակ եռ դեռ ընդունակութիւն ունէի տանջւելու: Սոսկալի է՝ երբ մարդու մէջ խիղճը մեռնում է. նա կորած է. ահա ինչպէս այս ըստէին ես:

Երբ էկան ինձ պատժելու, ես դիմեցի բանտապետին:

— Ես խելագար չեմ. ես շատ սովորական և շատ անբախտ մի մարդ եմ:

Եւ նա կարծես խղճայ ինձ: — Լաւ, դու հանգիստ մնա, ես հասցէների տնից կիմանամ և, եթէ նա այս քաղաքումն է, կը գտնեմ:

Միւս օրը բանտապետը սովորականից շուտ մտաւ մեր սենեակը և ասաց. — Ձեր կինը այստեղ, բանտից ոչ շատ հեռու, նոր բնակարան է վարձել. վերջին տեսութիւնից յետոյ խեղճը հիւանդացել է. ահա նա քեզ նամակ է գրել, ների՞ր, որ բաց եմ արել. բանտային օրէնքն է այդ պահանջում. ուրիշ կերպ անհնարին է:

Յուսահատութեանս վերջին ճգնաժամին սկսեցի կարդալ կնոջս նամակը:

«Աստծուն ինդրում էի, որ մի հրաշքով ինձ միջոց տար քեզ հետ խօսելու. շնորհակալ եմ, նա խընդիրքս լսեց:

«Ինձ թւում է, որ սա վերջին հրաժեշտն է քեզ հետ, ուզում եմ բանալ սիրտս, պատմել քեզ բոլորը. չգիտեմ որտեղից սկսեմ, ուր վերջացնեմ:

«Ամեն ինչ ես քեզանից ինամքով ծածկում էի. չէի ուզում վրդոված լինել քո, առանց այն էլ տանձած սիրտը, բայց այժմ եկել կուտակւել է, այլ ևս ոյժ չունեմ դիմագրելու. ցանկանում եմ հանգիստ հոգով հեռանալ քեզանից. Այսօր բժիշկը վերջին յոյսս էլ խորտակեց:

«Այս օրից, երբ քեզանից բաժանւեցի, վիճակս յանկարծ փոխւեց. դու ինձ ինամել, պահել էիր իբրև մի քնքուշ ծաղիկ. իսկ իմ գաւը մտատանջութեան հետ՝ աւելացաւ և սև աշխատանքը. օրէցօր քայլքայւում էր իմ առողջութիւնը. բայց դա ոչինչ. թող

գործ լինէր... ինձ համար անտանելի էր, երբ գործ չէի գտնում:

«Որքան նախատենք եմ կրել. բայց դա ես տանում էի, տանում էի, որովհետեւ ուրիշ ոչ մի հնար չկար: Հալածում էին ինձ, շատ անգամ դիտաւորութեամբ զցում էին ինձ անել դրութեան մէջ, որ ես իմ մարմնովս ստիպւած լինեմ յագուրդ տալ նրանց կրերին... դա ինձ աւելի էր խեղդում, բայց ես դիմացայ, կուելով այդ բոլորի դէմ: Հերթը հասաւ բնակարանիս. նրանք ինձ դուրս վռնդեցին, հեշտաեու զբաւ վերցրին, մինչև անգամ քո տւած նշանի մատանին խլեցին և թողեցին ինձ սառնամանիքների մէջ միանգամայն որբ և անտէր. օ, ինչ դառն է կեանքը:

«Ով կտար մեզ բնակարան, մանաւանդ երբ իմանում էին, որ լւացարար եմ. և ոչ ընդունում էին իրեւ աղախին, որովհետեւ հետո երեխայ կար. վերջապէս մեծ դժւարութեամբ մի անկիւն գտանք, փոքրիկ, սութ ու խոնաւ. բայց գոհ էի, մայր ու աղջիկ պատսպարւեցինք:

«Երեք զիշեր մնացել էինք գուրսը. իմ ամբողջ աշխատանքս երեխաս էր. ես նրան մի կերպ ցրտից պահպանեցի. այդ բոլորի վրայ աւելացրու մեր նիւթական նեղ դրութիւնը, քաղցը... հոգեկան տանջանքը, վերջնականապէս քայըայեցին ինձ: Եւ ահա հետևանքը. մի ամբողջ ամիս է պառկած եմ կողինքում:

«Ամեն անգամ, երբ գալիս էր այդ ինձ համար նւիրական—այցելութեան օրը, ես հոգով թոշում էի դէպի քեզ. մի ոյժ, մի ճիգ էի գործ դնում, հագ-

նըւում էի, ուզում էի ինչպէս էլ որ լինի գալ, ծնկներս դողում էին, աչքերս մթնում և ես զառը արցունքների մէջ հեկեկում էի. երեխաս էլ ինձ հետ լալիս էր, ես առնում էի նրան գիրկս և մխիթարում, յոյս ունենալով, որ մինչև հետեւեալ այցելութեան օրը կը կազդուրւեմ... և այսպէս անցնում էին օրեր, շաբաթներ. մի մարդ չունէի գուռս բացանող և եթէ հարկան պառաւ կինը չլինէր, գուցէ...

«Նա մի քանի անգամ հրաւիրել էր թաղային բժիշկը. նա երէկ նորից եկաւ. նա նայեց ինձ և ամեն բան հասկացաւ:

«Ես դիմեցի նրան և շատ պարզ կերպով պատմեցի մեր դրութիւնը:

«Խնդրեցի ուղիղն ասի առանց ծածկելու. չէ՞ որ ես մայր եմ և քանի որ շունչս բերանումս է, ուզում եմ երեխայս մասին հոգ տանել...

«Նա լուրջ կերպով քննեց հիւանդութիւնս և մի քանի անլսելի խօսքեր շշնջաց. նրա աչքերում ես նշմարեցի արտասոնքի կաթիւներ: Նա հինգ ուուրի փող դրեց սեղանի վրայ, գլխարկը ծածկեց և հեռացաւ. գղեղերն աւելորդ են, դռների մէջ խօսեց ինքն իրան:

«Դա ի հարկէ մեծ վիշտ պատճառեց ինձ. սրտիս խորքում դեռ յոյս ունէի, որ գոնիէ մի անգամ կայցելեմ, կտեմեմ քեզ... կխօսեմ քեզ հետ երես առ երես, այնքան ասելու բան ունէի...»

Ծերունին մի պահ կանգ առաւ, ծանր մտապատկերները ճնշում էին նրա հոգին: Տիսուր հայեացքով նայեց շուրջը և նորից շաբունակեց:

—Մի քանի օրից յետոյ կինս վախճանւում է:
Տանտէրը այդ մասին յայտնում է ոստիկանութեանը
և երկար ու բարակ ձևականութիւններից յետոյ, կը-
նոջս մարմինը հանգիստ է գտնում հողի տակ:

Երեխաս մնում է պոլիցիայի դռներին, երբեմն
այս, երբեմն մի այլ ոստիկանի ուղեկցութեամբ
քաշ է գալիս մի ապաստարանից միւսը, մինչեւ որ
վերջապէս նրան փոքրանասակ յանցաւորների ապաս-
տարանն առնում է իր յարկի տակ:

Ահա այժմ իմ գրութիւնը—կինս թոքախտից մե-
ռաւ, երեխաս ապաստարանում, իսկ ես բանտում...

Ի՞նչ կարող էի անել ես, ողորմելիս: Յիշեցի
իմ երէկւայ խեղկատակութիւններս և դառնագին ծի-
ծաղեցի...

Այժմ ես շատ հանգիստ էի պահում ինձ: Բան-
տային բոլոր օրէնքները կատարում էի սրբութեամբ
ահից, որ ոչ ոք առիթ չունենայ խանգարելու իմ
տանջանքի անգորբութիւնը:

Զարմանալին այն էր, որ շրջապատս այժմ ինձ
խղճում էր, բայց դա աւելի էր տանջում ինձ. ես
կծկում էի իմ անկիւնումս, որ աչքի չընկնեմ. նը-
րանց խօսակցութիւնը, արտասանած ամեն մի բառը,
ցաւ էր պատճառում ինձ:

Ես ուղում էի ամփոփել իմ մէջ: Կնոջս գերեզ-
մանի հողաթումբն աչքիս առաջից չէր հեռանում:
Այնտեղ դամբարանի խաչը ես չէի գտնում ու դա
տանջում էր ինձ:

Նա իր կենդանի ժամանակ, ամեն երեկոյ տիրա-
մօր պատկերի առաջ ազօթում էր և աչքերը լի բեր-

կրանքով խաչակնքում էր աղջկանս, առա երկիւղա-
ծութեամբ մօտենում էր ինձ և իր շրթունքներով
համբուրում էր ճակատս:

Նա պաշտում էր Քրիստոսի խաչը և այժմ նրա
գերեզմանի վրայ ես խաչ չէի կարողանում գտնել:
Եւ մտապատկերներիս ժխորի մէջ ինձ թւում էր,
որ յանցանք է կատարւած, նրա սուրբ յիշատակը
արատաւորւած է...

Ահա ձուլարանը: Հնոցի առաջ կանգնած եմ, ուր
պողպատի մեծ-մեծ ձողեր խոնւած բոօնզի զանգւած-
քի հետ՝ ցիր ու ցան թափւած են շուրջս և ես ու-
զում եմ դարբնել...

Հնոցը եռում է, կրակի բոցերը շուրջս տարած-
ւում են, բայց պողպատը չի շիկանում... Մուրճը
ծանրանում է ձեռքիս մէջ. սալը մեծացել, զարկերու
չեն հասնում նրան, և ես մնացել եմ յուսահատւած և
տանջանքի մէջ: Կառուցանում եմ բրօնզից, բոցու
հեղուկը թափում եմ աւազի մէջ... Լցւում են ա-
ռաջս հազարաւոր խաչեր, բայց որին ձեռք եմ տա-
լիս, փշրում է...

Մի հասարակ փայտի խաչ... Իմ հիւանդու ու-
ղեղիս մէջ նորից կենդանանում է իմ մէջ առաջւայ
հիւսն. ես փայտահատի գործարանումն եմ, ահազին
գերաններ թափւած են շուրջս, բայց մի հասա-
րակ փոքրիկ խաչ չեմ կարողանում սղոցել...

Նորից հնոցի առաջ, ապա ձուլարանը և ոչ մի
տեղ հանգիստ չեմ գտնում: Հողաթումբը մերթ հսկա-
յական մեծութեամբ, մերթ հազիւ նշմարելի, բայց
միշտ առանց խաչի առաջս է...

Զօրեղ ցնցումներից երկար ժամանակ ուշքի չէի գալիս, ինձ թւում էր, որ այդ բոլորը իրականութեան մէջ եմ ես տեսնում, և երբ ընկերներիցս մէկը կամ միւսը սթափեցնում էր ինձ, միայն այդ ժամանակ զգում էի, որ դա եղել է կօշմար, բայց ամբողջ հոգով վշտանում էի նրանցից և խնդրում էի, որ թողնեն ինձ հանգիստ:

Մի օր, մարդասպան կալանաւորներիցը մէկը՝ կարեկցութիւնից դրդւած՝ վերնազգեստի տակից հանեց մի մեծ շիշ օղի և առաջարկեց ինձ:

Ես նրան դառնազին վիրաւորեցի, ակնարկելով՝ որ ինքը իբրև մարդասպան. կարող է գործածել, որքան սիրտն ուզի:

Չգիտեմ որքան էի տանջւել, ինձ այդ դրութեան մէջ տարել էին հիւանդանոց. նորից բանտ: Վերջապէս աղմինիստրատիւ կերպով ինձ աքսորեցին մի յետ լնկած քաղաք, երեք տարի ժամանակով: Հեռանալ այդտեղից ոչ մի իրաւունք չունէի. ամեն շաբաթ ներկայանում էի տեղական ոստիկանութեանը, մնացած ժամանակ ազատ էի:

Հարկաւոր էր զբաղմունք գտնել, և դա ինձ յաջողւեց: Այդտեղ քաղաքին կից, ոռուսաց հողի վրայ գերման կապիտալիստները բացել էին մեծ գործարան՝ իրանց արդիւնաբերութիւնը առանց մաքսի Ռուսաստան ներմուծելու համար:

Օրավարձով մտայ այդ գործարանը: Երբ գործիքները ստացայ և ուզում էի ձեռնամուխ լինել աշխատանքի, ձեռքս գործի չէր գնում. անցեալը կենդանացաւ իմ մէջ... Համարեա նոյն գործարանը,

նոյն յաղթական և հուժկու մեքենաները... Ահա շոգեկաթսաների բաժանմունքը, ուր մեծ դղրդիւնով աշխատանքը եռում է: Միւս կողմը ձուլարանը, բոցոտ հեղուկը թափելում է հնոցից՝ կայծեր տարածելով շուրջը: Ահա մի այլ բաժանմունք, որը ծայրու սահման չունի. մեքենաները շարան-շարան, անիւ անիւ մէջ ձուլած՝ վիթխարի կամարների տակ՝ դառնում են ոլորապտոյտներով...

Ամեն ինչ իր տեղն է. մազ անգամ չի շարժւել. իսկ ես... ինչ է մնացել ինձանից այժմ... ես ակամայից, չգիտեմ ինչու, նայեցի ոսկրացած ձեռքերիս...

Դաուը մտատանջութեան մէջ, յուսահատութեան վերջին ճնշաժամին հասած՝ աշխատում էի մինչև որ կոչնակը հնչեց: Աշխատանքները դադարեցին: Շարան-շարան դուրս եկան գործարանի բանւորները:

Ես չէի շտապում... Ուր գնամ... Ցիշեցի իմ նախկին օրերը... Նրանք երազի նման մի վայրկեան շոյեցին իմ հոգին... ե...

Այն ժամանակ երբ գործը վերջանում էր, կայտառութեամբ թռչում էի դէպի տուն. ինձ այնտեղ անհամբեր սպասում էին: Երեխաս ընկնում էր գիրկս և...

...Իսկ այժմ ուր գնամ ես:

—Կարակ...

Նայեցի շուրջս, ով արտասանեց այդ զարհութելի խօսքը, նա այնքան պարզ հնչւեց ականջներիս և կարծես հոգուս խորքում տեղ էր գտել... մնացի շւա-

ըած և տատանման մէջ. նա նորից խօսեց և աւելի դօրեղ.

— Գնանք կաբակ...

Մօսս կանգնած էր նախկին գործարանում աշխատող եմ ընկեր բանտորը: Նա դէմքիր վրայ կրում էր վշտի խորը կնիք. մէջքը կորացած, մազերը վաղաժամ սպիտակել էին: Նա առաւ թևս և ես այլս չկարողացայ ընդիմանալ:

Մտանք կաբակ: Ինչ որ անհրաժեշտ էր՝ դրւեց մեր սեղանին, նա իրար ետեից երկու բաժակ դատարկեց: — Ահա միակ տունը, որի դռները միշտ բաց են իմ առաջ: Նա ձեռքը դրեց ուսիս և կարեկցաբար նայեց աչքերիս, երբ վիշտը ծանր է, հարկաւոր է նրան խեղդել: Մի վայրկեան նա կանգ առաւ, ապա շփեց ճակատը և զգալով, որ կար մէկը, որ իրան համբերութեամբ կը լսի, սկսեց ինքն իրան խօսել:

— Այս միջոցին գործարանը փակւեց: Ես մնացի չորս երեխաներովս կնոջո հետ դուրսը: Առաւօտից մինչև ուշ երեկոյ աշխատանք էի որոնում, բայց ոչ մի տեղ գործ չկար, և յուսահատ վերադառնուս էի տուն:

Կինս միշտ ինձ յուսադրում էր, որովհետև մեր գոյութիւնը պաշտպանում էր շնորհիւ նրա մի ծանօթ պարոնի, որը փոխարինաբար փող էր տալիս մեզ:

Երբ նստում էինք ճաշելու, կոկորդս կուչ էր գալիս, պատառի տեղ ես արցունքս էի կուլ տալիս... Իմ տունը, կնոջս, երեխաներիս համար մի ուրիշ այլ մարդ էր հաց բերում. և ես ոչ միայն չէի արգելում, այլ ինքս ուտում էի նրա բերածը:

Դու չես կարող երեակայել, թէ դա որպիսի տանջանք է, երբ քու տանը իշխում է մի ուրիշ այլ մարդ:

— Այսօր ես նորից հինգ ոռւբլի վերցրի, խօսեց կինս մի օր ճաշին. այժմ մենք նրան հարիւր ոռւբլի ենք պարտ:

Անցաւ էի մի քանի ժամանակ: Կինս շատ տխուր էր և համարեա մենք ոչինչ չունէինք ուտելու. ես չէի վստահանում հարցնելու. իսկ աշխատանքը կարծես քարն էր մտել...

— Երեք ոռւբլի խնդրեցի — նա էլ չտւեց. 120-ի է հասնում մեր պարտքը, ինչ պէտք է անենք սրանից յետոյ, խօսեց կինս մոլորւած:

Հասկանում ես, դա ինձ ուրախացրեց, ես պատրաստ էի ընկնել կնոջս ոտքերը ու ներողութիւն ինդրել նրանից:

— Ոչինչ, ես մի կերպ կաշխատեմ հանգստացրի կնոջս և մտքումս դրի մուրալ:

Ծածուկ առայ ցնցոտիներս և դուրս եկա փողոց:

Ինձ թւում էր, որ դա հեշտ է, բայց մինչև կէս գիշերը թափառում էի և չվստահացայ ոչ մէկին ձեռք մեկնել:

Հետեւեալ օրը բառիս բուն նշանակութեամբ քաղցած էինք, մանաւանդ մի երեխաս էլ հիւանդ էր... Յուսահատութեանս վերջին ճգնաժամին դիմեցի կը նոջս. — Միթէ այդ պարոնը, որ այսքան լաւութիւն է արել, մի քսան ըռւբլի էլ չի կարող զոհել մեզ՝ մինչև գործարանը նորից բացւի:

— Նա ինձ ասաց հարիւր էլ կտամ, միայն թէ...

Կինս կարմրեց. մեր աչքերը վայրկենապէս հանդիպեցին իրար և մեռան...

Դա ինչ սոսկալի հարւած էր, որ ընկաւ իմ գըլխին...

Ես լուռ հեռացայ տնից: Երեխաներիս լացը այւա ականջներիս մէջ չէր հնչւում...

Ուղղակի գնացի այն պարոնի մօտ, իբրև մի վիրաւոր արու:

Նա ինձ շատ սիրալիր ընդունեց: Նրա աչքերը փայլեցին ուրախութիւնից. իսկ իմ շոթունքները դոզում էին:

—Ինչով կարող եմ ծառայել. դիմեց նա ինձ մեղմ, պատրաստ ամեն ինչ կատարելու:

...Քսան... ըուբլի... դուք... հազիւ կարողացայ շնչալ ես:

Աչքերս մթնեց և վայր ընկայ կանգնած տեղս: Նա ինձ ուշքի էր բերել:

Երբ աչքերս բացի, նա սրւակը ձեռքին, գունատւած՝ ամբողջ մարմնով դոզում էր: Ես ներողութիւն խնդրեցի և մի կերպ դուրս եկայ փողոց:

Գնում էի, ուր, ինքս էլ չգիտեմ. երբ կանդ առայ, տեսայ, որ կամուրջի եզրին եմ: Մի ակնթարթում ցատկեցի և ընկայ գետի հոսանքի մէջ:

Հիւանդանոցում ինձ հարցնում էին՝ ի՞նչու եմ նետել ինձ գետը. ով եմ ես: Դա այնքան տարօրինակ էր թւում ինձ:

Ես լուցի մինչեւ վերջը: Այլևս իմ դրութիւնը ինձ չէր հետաքրքրում, ուր մնաց նրանց:

Ինձ համար շատ պարզ էր. այն միւս այրը արդէն լիակատար տէր էր իմ տանը...

Այժմ այլևս ոչինչ չունեմ. ահա և իմ կինս, երեխաներս և տունս ու տեղս, բոլորն այստեղ են. Նա ցոյց տւեց օղու դատարկ շները և դառնագին հեկեկաց:

Զգղջացի, որ եկել եմ կարակ և խմում եմ օղի: Խմում էի որ թունաւորէ նա իմ հոգին, իմ սիրտը, իմ ամբողջ էութիւնը... մինչեւ վերջին անասնական աստիճանը:

Ամենայն օր գինետունը կլանում էր ինձ և ես արդէն դառել էի նրա ստրուկը: Անտանելի էր ինձ համար երբ ես հարբած չէի:

Ինոյս գերեզմանի հետ ես արդէն հաշտւած էի. բայց ինձ տանջում էր աղջկաս վիճակը. նրա երեխայական պատկերը աչքից չէր հեռանում: Ինձ թւում էր, որ նրա մանուկ կեանքը թունաւորում են...

Եւ մի օր երբ մանիֆեստը ողորմածաբար յայտարարեց, որ ես բոլորովին ազատ եմ, նոյն վայրկեանին թողի և փախայ այդ քաղաքից, այդ կարակների որջից...

Մի միտք կար գլխումս. ինչպէս էլ որ լինի որոնել աղջկանս...

Ահ, որպիսի դառը հեգնանք էր դա... ինչպէս կուզէի, որ նա մեռած լինէր... և յաւիտեան ես նրան չտեսնէի...

Ծերունին յուզեց. նա այլևս չկարողացաւ խօսել: Պղտոր հեղուկը թափւում էր տանջւած երեսից, կաթ-կաթ ընկնում էր հագուստի լաթերին: Փէշի

ծայրը կամաց բարձրացրեց և սրբեց տչքերը։ Նայեց շուրջը, բոլորն էլ տխուր էին և ինչ որ մտատանշ ջութեան մէջ, և ոչ ոք չէր ուզում լոռութիւնը խանգարած լինէր. անհամբեր սպասում էին, որ ծերունին շարունակի։

Աղմուկով խփեց կայարանի զանգը։ Շառաչիւնով մօտեցաւ գնացքը։ Ճանապարհորդները խոնւեցին իւրաք, շտապ-շաապ տեղաւորւեցին վագոնների մէջ։

Ծերունին դեռ երկար ժամանակ կայարանումն էր. և երբ վերջին կրակն էլ մարեց, նա երերալով դուրս գնաց և դանդաղ բայլերն ուղղեց դէպի մօտակայ օղետունը...

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

Արտատպւած «ընկեր» № 1

Երեղ դահլիճ, էլէքտրական վառ լուսաւորութիւն, ճոխ կահ-կարասիք, պատերը զարդարւած թանկագին նկարներով, չորս կողմու թաւիշ ու կերպաս։ Մի անկիւնում դաշնամուրը, միւս անկիւնում ծաղիկների մէջ թաղւած արձաններ ու քանդակներ։ Մի տեղ ուկէ ձկնիկն է լողում, միւս ծայրում սոխակն է խօսում։ Ուրախ են այդ վանդակում փակւած թըռչունները, յստակ ջրերում լողացող ձկնիկները ու կէ զարդ կահ կարասիքը և մերկ կուսական արձանները... Բոլորը ուրախ են. իսկ վղոսկրեայ դաշնամուրը՝ լինչպէս է նրա ոիրաը թըպրտում. ամբողջ մի շաբաթ է պատրաստում են, այս երեկոյ նրա տօնն է. նոր տարի է. շուտով հիւրերը պիտի գան. դահլիճը պիտի դղրդայ. Նազիկը իր քնքոյշ մատներով, Վարդիկը իր անուշ ձայնով նրա հետ պիտի խօսեն, նրա սրտի նուրբ թելերը պիտի շարժեն և զգայուն հոգին պիտի ալէկոծեն՝ այրեն ու խորովեն։

Տանտիկինը դեռ իր տուալէտի հետ է. նա այսօր հագնուում է ամենաթանկագին զգեստը, որը յատուկ պատէրով Պարիզից է ստացել. ամբողջ մի ժամ է՝ հայելու առաջ զմայլուում է, նրան դուր է գալիս մա-

Նաւանդ կտորի գոյնը, բաց սիրէնագոյն ֆոնի վրա
փայլում են անհամար լուսատու կէտեր, որոնք նրա
իւրաքանչիւր շարժումից գոյները փոխում՝ խաղում
էին լուսոյ ճառագայթների հետ, տալով նրա նրբա-
կազմ իրանին հմայիչ, կախարդական տեսք։ Նոր շարք
գոհարազարդ սանրերը խոպոպիկների հետ հիւսելուց
յետոյ, մի վերջնական ակնարկ գցեց հայելում և հա-
մոգւելով, որ ամեն ինչ տեղին է՝ ինքնարաւական
ժպիտը երեսին անցաւ դահլիճը, տանելով իր վրա
օծանելիք եղերի անուշանոտ բուրմունքը։

Նա կանգ առաւ դաշնամուրի առաջ, մի ընդհա-
նուր հայեացք գցեց դահլիճին, ապա մատներով ա-
րագ շարժում արաւ կլաւիշներին, իբր դաշնամուրը
փորձելու, բայց դա աւելի շուտ նրա համար էր, որ
տեսնէր թէ մատանիները որքան են սազում, որպի-
սի փայլ են տալիս և էլէքտրական լուսի հետ ինչ-
պէս են խաղում։

Ուրախութիւնից քիչ էր մնում ճշար. հրաշալի
էր, մատանիները ուղղակի այրւում էին։

— Սէրիօժա, ժօրժ, ժօրժիկ, չես լսում, ուրախ,
ուրախ գոչեց նա։

— Այս վայրկեանիս, հոգեակս, հարևան սենեա-
կից փողպատը ուղղելով գուրս եկաւ մաքուր հագնւած,
ածիլած գէր երեսով, սև, ոլորուն բեղերով, ժպտուն
աչքերով, ոսկեայ շղթան կրծքին գցած, քառասունին
մօտ բարձրահասակ մի մարդ։

— Ահ! այդ զգեստը որբան է քեզ սազում, ուռ
կատարեալ հրեշտակ ես, նազիկս։

— Սպասիր. ես զրա համար չ'կանչեցի, ես քեզ

համար ուզում եմ մի բան նւագել, բայց դու մատ-
ներիս նայիր. տրայլայլայ...»

— Ուրախութեամբ։

— Նայեցիր։

— Այո։

— Բան չ'նկատեցիր։

— Դու հրաշալի նւագում ես, դու աննմա...»

— Ոչ, ոչ, այդ չի. չ'գտար։

— Դու այս երեկոյ հիւրերի մօտ, անպատճառ
դու կը նւագ...»

— Ոչ, ոչ, ոչ...»

— Սպասիր գտայ... մատներդ այնպէս ես շար-
ժում ինչպէս հրեշտակ...»

— Ոչ, ոչ, լաւ նայիր. լաւ նայիր...»

Ժօրժիկը, (բազազ Սէրգօն), մնացել էր շւարած.
և նա երկի երկար պիտի մտածէր. նրան ազատեց
կամացուկ դռան բացւելը։ Մարդ և կին սառած և
զարմացած նայեցին եկողին. նա առանց խօսելու
քայլերը ուղղեց առաջ և պատին յենւելով՝ երերալով
մի երկու քայլ էլ արաւ և ընկաւ առաջի պատահած
աթոռին։

Լաւ է որ աթոռին—մտածեց կինը, զայրոյթը
զսպած—եթէ ոչ բազկաթոռը կը կեղտոտէր. Ո՞րտե-
ղից լուս ընկաւ—մտածեց մարդը, ատամները կը-
ճտացնելով։

Անկոչ հիւրը յօդնած էր, դալկացած ու մաշւած.
նա ամբողջ մարմնով գողում էր, նրան ծածկում էր
մի հին, գրպանները պատռած, պինջակ. կօշիկները
ցեխոտւած, մազերը գծընւած, միրուք և բեխերը

ծածկում էին ամբողջ բերանը. շրթունքները զսպւած,
կարծես հազիւ էր շնչում:

—Ո՞վ է սա, ի՞նչ ես լոել, համբերութիւնից
դուրս գալով խօեց կինը:

—Ը՞հ... չփտեմ: Ո՞վ ես դու, ի՞նչես կամենում:

—Ես... քու եղբայրն եմ, չես ճանաչում, երկրից
եմ գալիս:

—Եղբայր... Սէրիօժա, սա ի՞նչ է...

—Դա խելագար է, հոգիս... ուշադրութիւն մի
գարձնիլ:

—Այո, սա խելագար է, Սէրիօժա, ես վախում
եմ, ազատիր:

—Գնա դուրս, ես ծառաներին կասեմ՝ քեզ կե-
րակրեն, հասկանեմ ես:

—Խանումը թող չ'վախի և դու մի անհանգստա-
նալ. ես խելագար չեմ. ես քու հարազատ եղբայրն
եմ... Ամբողջ օրը որոնում էի, հազիւ գտայ ձեր
ընակարանը...

Ի՞նչ անհասկացող ես, քեզ ասում են գնա խո-
հանոցը՝ այնտեղ քեզ բան կտան ուտելու:

—Ճիշտ է, ես անօթի եմ:

—Իէ գնա, ի՞նչ ես նստել, քեզ ասում են
այնտեղ...

—Բայց ես չեմ միայն քաղցածը. երկիրը տառա-
պում է այնտեղ հեռուն. մանուկները մեռնում են.
սովը լափում է ամեն ինչ՝ անգութ և սառը... Ամբողջ
տարի է թափառում եմ, հազարաւոր դոներ եմ
բաղսել...

—Բայց դու, դու պիտի հեռանմաս այստեղից,
թէ ոչ:

—Ես չեմ եկել այստեղ. այստեղ սովն է մտել.
այստեղ կմախքն է, և եկել է նա այս շքեղութիւնը
փշրելու... և...

—Կանչիր ծառաներին, Սէրիօժա:

—Եկել է նա իր ոսկրացած ձեռքերով սեղմե-
լու... սոսկնում էք:

—Դուրս, դուրս այստեղից...

Նա նորից կանգնենց և աւելի խիստ դողալով
դուրս եկաւ դռներից. ցաւոտ ու դառը:

—Ամբողջ արամադրութիւնս փոխւեց, ձեռքերս
սառաւ, ինձ վալէրիան տուր, Սէրիօժա, ախ ինչ
վատ եմ...

—Ի՞նչ պատահեց, սիրելիս... այս վայրկեանիս,
ահա բերել եմ, խմիր. դէ, դատարկ բան է, հան-
գստացիր:

—Հանգստացիր, կարծում ես հեշտ է. կանչիր
ծառային:

Սարգիս, Սարգիս, շուտ, ազջիկ պարոնը կան-
չում է:

Ի՞նչ կը հրամայէք:

—Ընթրիքը պատրաստ է, ամեն բան իրան կար-
գին:

—Հրաման քեզ աղջիկ պարոն

—Տես չ'խայտառակւենք, հիւրերը շուտով կը
գան. դէ գնա դործիդ:

Ախ, դու ինձ ի՞նչպէս վախեցրիր, հըեշտակս,
ախը արժէր այդ խելագարի համար այդքան վրդ...

—Մի, մի յիշեցնիր, մի յիշեցնիր... Այ տես
այժմ ես կնւազեմ, բայց դու լաւ նայիր... տրայ լայ լի,
տրայ լայ լայ... չ գտա՞ր:

—Ըստ...

—Ուհ, ինչ անշնորքն ես եղել. մատանիներս
չես տեսնում, ինչպէս են փայլում:

—Ախ գա, իրաւ, որքան են սազում, որքան են
սազում, հրեշտակս, հրեշտակս:

—Հրեշտակ, հրեշտակ... կարծես էլ ուրիշ բան
չգիտես, ֆի...

«Աղջիկ պարոն, հիւրերը եկան»:

—Վարդան Գասպարիչն էլ եկաւ,

—Հրաման քեզ, եկաւ:

—Համեցէք արա, համեցէք արա...

Օ Ձ Է

Երբ պատահում էի քեզ ճամբուս վրա սողալիս,
կամ ժայռի ափին կծկւած, արիւնն աչքերս՝ յար-
ձակւում էի վլադ:

Գալարուն մարմինդ կուտակւում էր, թունալից
լեզուդ հանում էիր և, դարան մտած, ամբողջ թա-
փով պատրաստում էիր նետելու վրաս:

Հարւածներս տեղում էր. դու գլուխի ոլորում
էիր ահաւոր, որ թոյնդ թափես իմ սիրտը, բայց ա-
հա ես քեզ վիրաւորեցի. Գալարում ես շուրջս, կա-
տաղի ոստոյններ ես անում, սակայն անօգուտ հար-
ւածներս տեղում են նորից և դու կիսամեռ ընկած
ես այդ անհաւասար կուի մէջ:

Բայց դա բաւական չէ. հեգնանքով մօտենում
եմ քեզ, գլուխի առնում քարի տակ ու նորից ջար-
դում եմ նրան:

Ծնկած է առաջս ու, երկայն մարմինդ... չկա
նրա մէջ առաջւա սարսավլը:

Հեգնանքով զցում եմ գարշելի դիակդ ճամբի
եղբին, մացառների վրա, որ մարդիկ տեսնեն, ու
ծաղրեն նրան:

Ա՛հ, որպիսի չարախինդ ծաղը...

*
* *

Տարիներ, դարեր անցնում էին յաջորդելով ի-
րար և ես թանձը մղձաւանձի մէջ խարխափում էի:
Անգիտակցութեան ճիրաններին մատնած՝ տանում
էր ինձ կոյր հոսանքը ուր որ կամենար. և ես անձ-
կալի տեսչով վազում էի նրան ընդառաջ:

Ցաւի, տանջանքի օրը ճանաչեցի քեզ. երբ սիրոս
ալէկոծում էր դառնագին, երբ երակներիս մէջ ե-
ռում էր վհատութեան սկ բօթը:

Դու ընկար բարձրունքից... ընկար դու գետին
յաղթւած երկնքից, վիրաւոր ու ցաւատանջ:

Փու տւած իմաստութիւնը ծաղրեցին, քեզ հալա-
ծեցին, արհամարեցին ամենուրէք:

Մութ հողի տակ միայն դու տեղ գտար տան-
ջւած գլուխդ թաղելու, ցաւագալ ու հալածւած...
Եւ հողը և ջուրը և աւազը սառան քո ճամբին. ու
ոչ մի տեղ հանգստութիւն չկար քեզ համար:

ՓՈՔՐԻԿ ԱՇԽԵՆԻԿԸ

Սենեակիս մի անկիւնում երեխաները խազում
էին. յանկարծ իմ ուշադրութիւնը զրաւեց նրանց
հետեւալ խօսակցութիւնը:

— Արի, իմ մօտ նստի, տես, ես ասեղ ունիմ,
ես թել ունիմ, հուլուն եմ շարում. կանչեց քրօջը
Աշխենիկը:

— Դու հուլուն ունիս. ով տւեց:

— Գոհարը. նա այնքան շատ ունի, ինձ միքիչ
է տալիս:

— Վատ գոհար: Ո՞ւմ համար ես շարում:

— Տիկինիս: Հայրիկս իմ համար մեծ տիկին պի-
տի բերէ. աչքերը քնող, գիտես. ես գոհարին չեմ
տալ:

— Նա լաց կանի:

— Թող լաց անի: Բաս ինչի, ինձ եղուց, նա
ծառի մօտ չտարաւ. ինքը խակ ծիրանը կերաւ... մայ-
րիկը հօ կ'ըարկանա:

— Դու չկերմը, ծիրան:

— Ես... ես... ես տիկինի համար, գոհարը, ինձ
որ տանի, իմ գրպանումը էլի կ'բերեմ: Տիկինը թող
ուտ է, հմէ:

—Նա ատամներ որ չունի՞:
—Ունի, դու չես տեսել: Ժողժիկի տիկինը ա-
սում է, մա մա, պա պա. բաս ատամներ չունի՞:
—Ատամներ ունի, համա չի կարողանում ուտել:
—Կարողանում է: Բաս ինչի՞ գուլբա է հաքնում,
կոշիկներ ունի՞:
—Կոշիկներ ունի, համա ստները սուտի են:
—Սուտի չեն:
—Սուտ են, աչքերն էլ սուտի են, մազերն էլ
սուտի են. բոլոր, բոլոր սուտի են:
—Վաճայ, սուտի են, համա դորթի են, դու չը-
գիտես:
—Հաճամ...

Միթէ ինքս «Սուտին—դորթի» չեմ անում, աչ-
քերս փակում լոյսի առաջ ու կոյր ձևանում... ա-
կամա մտածեցի ես և գրիչը ընկաւ ձեռքիցս վայր:

Մ Ա Ր Դ Ը

Անհազ ցնծութեամբ անցաւ նա ստրերի միջից.
ոլորեց կատաղի ջրվէժներ, լեռներից կախեց հակա-
մուրջներ... Զուրը, շոքի արաւ և, կրակը կուրծքը, լոկ-
մօտիւն որոտուն էր կատաղի. անիւները դառնում
էին թափով. սլանում էր նա ահեղ արագութեամբ:
Սարեր փախչում էին, ջրեր կանգնում էին հոսանքի
մէջ, անտառներ դողում էին նրա շնչից:

Անա մի նոր աշխարհ... ահա շողերի հովիտը,
մարգարիտ ջրվէժը, գոհարազարդ ալիքները. թուչնոց
ազատ երգը. աստղերի ցոլքը ծովում:

Բիւրեղ ջրերում խաղում են զիցուհիներ. ա-
լիքները հպւում են չքնաղ մազերին. ծեփուն Ջրերը
շողում ու ցող են մաղում փրփուր ամպերից. և նը-
րանք, յստակ, անաղարտ, իբրև լուսանցիկ շղարշ, սուզ-
ւում են դալար ակունքների մէջ...

Մեղմիւ, վեհութեան սքանչելի արբունքում նը-
րանց օրհնում է և ջրերի հորձանքը. և ալիքների
փրփուրը. և արշալոյսի զեփիւռը...

Մարդը շնչարգել գիտում է, ցնցւում է իր ամ-
բողջ էութեամբ և զմայլմունքի հախուռը բերկան-
քով նա երազում է, այդ գիւթական աշխարհը:

Այս փրփուր ամալերից մի ցող է ընկնում նրա երեսին. այն յուղւած ծովից բերկրութեան ձայնն է զողանջում նրա ականջին...

Օ՛ որքան սքանչելի է...

* * *

Հսկա մակոյկը ալիքներ ճեղքելով լողում է ծովի երեսին. շոքին բոլորել է շուրջը, հևում որոտում է և մարդը կայմին կանգնած՝ դիտում է հեռուն, զմայրում է ծովի դիւթական տեսարաններով։ Ալիքներ խփուում են իրար, յորձանքներ տեղի են տալիս մեղմ զեփիւոին մակոյկը օրօրւելով կանգ է առնում. առագաստները իջնում են ցած, խարիսխը հանգչում է ծովի յատակին։

Լողում են ոսկի ձկնիկներ, գոհար ակունքների հետ օրօրւում են նրանք ալիքների ծոցում. և աստղերը և լուսինը մեղմ խաղում են նրանց ստւերների ցոլքերում։

Ծովը բացել է իր սիրտը. ջրասոյզ նաւակը լողում է կաթին փրփուրի մէջ։ Մարդը ահեղ յորձանքներով անցնում է ջրերի տակ։

Ալիքները խոնւում են. բարձրանում է կատաղի մըրիկ, ուզում է խորտակել ամենինչ, բայց մարդը յաղթում է այդ բոլորին, հասնում է ծովի յատակը, ուրժայուերը աղամանդեն, աւազը յակինթ. կապուտակ երկինքը փայլում է ալիքներին գրկած։

Նա իրան դգում է նորից մեծ ու կարող։

Մակոյկը երերում է և մի ակնթարթում նա նորից լողում է ջրերի մակերեսոյթին։

Ահա օրօրւում է նրա ոտքերի տակ հրեղէն թեանիւը. մարդը սլանում է ահաւոր եթեր, խաղում է տստղերի ցոլքերում։ Լուսինը մեղմ ճառագայթներով գրկել է նրան, զմրուխտ կամարը գերել է անսահման սիրոյ երջանիկ հմայքով և ինչպէս վաղօրդեան տուաջին ցոլքը, այն ջենջ եթերում, շողում է նա։

Անյաղթ մեծութեամբ իջնամէնա ցած։

* * *

Նա տիրել է և ծովին և յատակին, և ողջ տիեզերքին. Աւելի քան նա իրան զգում է կարող ուղարաւոր. և վառքի գագաթնակիտին հասած՝ կամենում է այժմ շոշափել իր մատներով, զգալ այդ ամենը իր մարմնի ջերմութեամբ, ճաշակել իր բոլոր զգայարանքներով. գրկել ողջ տեղերը, ապօքել իր յաղթական վառքով։

..Նա կանգ առաւ. երբ ուշքի եկաւ, նա զգաց թէ ինչպէս այնուեղ, հոգու խորքերում լուս հեկինեկում էր մի անկիւն, այնքան վշտալից ու սրտառուչ։ Նա զգում էր ինչպէս սիրաը մորմոքում, աչքերը պղտուրում էին և թափիծը խեղպում էր իրան։

Նա մի վայրկեան վճռեց խլացնել իր ներքին ձայնը, տրորել անցնել նրա վրայից։ Շղթայեց նրան ձնշող օղակներով, հնարեց աւելի ամուր կապանքներ, մօռացաւ նրան, վախտ նրանից. բայց նա, հոծ երկաթների զանգւածըների տակից, նորից ցաւեցնում, հեկինեկում ու բողոքում էր։



ՑԱՆԿԸ

	Երկու
1. Մեքենավարի յիշատակարանից .	յախ. առա 3
2. Բանտում	պար 7
3. Յաղթւած մահը	յանդ 19
4. Ճակատագրին	յործ 21
5. Կաժուրջը	յայուտ 25
6. Թափառականը	յայութ 33
7. Երկու եղբայր	յայութ 59
8. Օձը	յայութ 65
9. Փոքրիկ Աշխենիկը	յայութ 67
10. Մարդը	յայութ 69

ՀՀ Ազգային գրադարան



NL0360183

I ԳՐՅՈՅԵԿԻ ԲԱԼԱՆԴԻԿԱԼԻԹԻՒՆԸ

1. Շուշան,
2. Լուսի (թարգմանւած է ռուսաց լեզով),
3. Հոփիսի,
4. Պահակը, (թարգ. վրաց լեզով),
5. Բանւորը,
6. Մի կտոր հացի համար (թարգ. ռուսաց լեզով),
7. Կապոյտ շապիկ (թարգ. վրաց լեզով),
8. Արցունքներ,
9. Վիշտը,
10. Տիուր պատմութիւն:

Գիր 1; 30 կող.

II ԳՐՅՈՅԵԿԻ ԲԱԼԱՆԴԻԿԱԼԻԹԻՒՆԸ

1. Մերենավարի յիշատակարանից (թարգման է ռուսաց և վրաց լեզուներով),
2. Բանւոր աւակադոբին,
3. Վաղթւած մահը,
4. Կամու աւագը,
5. Թափառականը,
6. Երկու եղբայր,
7. Օձը,
8. Փոքրիկ Աշխենիկը,
10. Մարգը:

Գիր 1; 30 կող.